«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Տաթև Ասրյան
ԱրՊՀ իրավունքի ամբիոնի մագիստրանտ
tatevasryan94@gmail.com
Գիտ. ղեկ.՝ ԱՀ Մարդու իրավունքների պաշտպան, ի.գ.թ., դոց. Ռ.Մելիքյան

Պետության ճանաչումը միջազգային իրավունքի շրջանակներում մի պետության կողմից ճանաչվող սուբյեկտին միտված հայտարարություն է, որով նա միջազգային իրավունքի իմաստով ճանաչում է սուբյեկտին որպես «պետություն»[1]:

Միջազգային իրավունքի տեսության մեջ միջազգային իրավական ճանաչման նշանակության մասին գոյություն ունեն երկու տեսություններ՝ սահմանադիր և հռչակագրային: Համաձայն առաջինի՝ ճանաչումը պետության միջազգային իրավասուբյեկտության պարտադիր պայման է, քանզի ճանաչման հասցեատիրոջը հաղորդում է դրա համար անհրաժեշտ հատկանիշներ: Հռչակագրային տեսության համաձայն՝ այլ պետությունների կողմից ճանաչումը սուբյեկտին որևէ հատկություններ չի հաղորդում, այլ ընդամենը հռչակում է նրա՝ միջազգային իրավասուբյեկտության համար անհրաժեշտ հատկանիշների առկայությունը և դրա հիման վրա հարաբերություններ հաստատելու պատրաստակամությունը:

Տարածված տեսակետի համաձայն՝ ճանաչման հռչակագրային տեսությունն է մեծապես համապատասխանում միջազգային կյանքի իրողություններին, քանզի հայտնի են դեպքեր, երբ պետությունները երկար ժամանակ գոյություն են ունենում առանց միջազգային ճանաչման, սակայն դա երբևէ չի ազդում նրանց՝ ինքնիշխան պետություններ հանդիսանալու համար[2]:

Այնուամենայնիվ, բացասական հետևանքներ կարո՞ղ է ունենալ պետության չճանաչված լինելը, թե՝ ոչ:

Արցախի Հանրապետությունը, որն իր անկախությունը հռչակել է 1991թ. սեպտեմբերի 2-ին, հիմք ընդունելով 1991թ. դեկտեմբերի 10-ին տեղի ունեցած համաժողովրդական հանրաքվեի արդունքները[3], ՄԱԿ-ի անդամ որևէ պետության կողմից պաշտոնապես իրավական հարթությունում ճանաչված չէ: Չնայած, անկախության հռչակումը և տարիների ընթացքում իրականացված պետականակերտ գործունեությունը հիմնվել է միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքների ու նորմերի վրա, այնուամենայնիվ, Արցախի Հանրապետության կարգավիճակի փոփոխություն մինչ օրս տեղի չի ունեցել:

Արցախի Հանրապետության չճանաչվածությունն իր բացասական ազդեցությունն է ունենում արցախյան իրականության տարբեր ոլորտների վրա.

1.Չճանաչված պետություններում առաջին հերթին խախտվում է ազատ տեղաշարժի իրավունքը: Սովորաբար, երբ մի պետությունը չի ճանաչում մյուս պետությանը, չի ճանաչում նաև այդ պետության անձնագրերը:

---

[1] Տես՝ https://www.academia.edu/6444567/The_recognition_of_states_and_governments_under_international_law_I._The_recognition_of_states, էջ 1:
[2] Քոչարյան Վ., Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ:Երևան, 2002թ., էջ՝ 72:
[3] Տես՝ http://www.nkr.am/hy/referendum/42/

ԱՀ դեպքում Ադրբեջանը փորձում է սահմանափակել Արցախի բնակչության ազատ տեղաշարժի իրավունքը նաև խոչընդոտելով Արցախի տարածքում հաղորդակցության ուղիների զարգացմանը[1]:

2.Կրթության հասանելիությունը միջազգային ասպարեզում հաճախ չի պահպանվում Արցախի քաղաքացիների համար:

2016թ. ընթացքում ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է դիմումներ ԱՀ չճանաչվածության հիմքով Արցախի մի շարք քաղաքացիների այլ պետություններում կրթության իրավունքի իրացման խոչընդոտների մասին[2]:

3.Ադրբեջանական կողմի ճնշմամբ Արցախցի ներկայացուցիչների համար արգելք է դրվում մասնակցելու միջազգային դասընթացներին, սեմինարներին և նման այլ միջոցառումներին[3]:

4.Արցախցի մարզիկները, արվեստագետները հնարավորություն չեն ունենում ներկայացնելու Արցախի Հանրապետությունը միջազգային բնույթի միջոցառումներում: Որպես կանոն, նրանք հանդես են գալիս ՀՀ թիմերի կազմում[4], սակայն այդ դեպքում ևս հաճախ Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից դիտավորյալ ստեղծված լարվածության են ականատես լինում[5]:

5.Ադրբեջանը խոչընդոտում է Արցախի տնտեսության ներուժը միջազգային ասպարեզում ներկայացնելուն՝ միջազգային տարբեր տոնավաճառներում Արցախի տաղավարների առջև ցույցեր կազմակերպելով[6], պետություններից պահանջելով չներկրել արցախյան արտադրանքը[7] և այլն:

6.ԱՀ չճանաչման հետևանքով իրավունքների ոչ պակաս լուրջ խախտումներ են արձանագրվում նաև օտարերկրյա քաղաքացիների կողմից Արցախ այցելելու դեպքում:

Ադրբեջանի «սև ցուցակում» հայտնվում[8], քրեական հետապնդման են ենթարկվում Արցախ այցելած լրագրողներ, բլոգերներ, պաշտոնատար անձինք[9] [10] [11]:

7.Արցախում Մարդու իրավունքների երաշխավորման մակարդակի բարձրացման, Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի խաղաղ բնակչության և զինվորականության նկատմամբ կատարվող հանցագործությունները կանխելու հարցերում կարևոր նշանակություն ունի Արցախում միջազգային իրավապաշտպան հանրության ներկայության ապահովումը: Արցախում միջազգային իրավապաշտպան կազմակերպությունների բացակայությունը ևս ԱՀ միջազգայնորեն ճանաչված չլինելու բացասական հետևանքներից է:

---

[1] Տես՝ https://artsakhpress.am/arm/news/67029/stepanakert-shushi-chvertnery-sarsapecrel-en-baqvin.html

[2] Տես՝ http://www.ombudsnkr.am/reports_2016.pd, էջ 27

[3] Տես՝http://aghavni-press.blogspot.am/2011/07/blog-post.html

[4] Տես՝http://yerkirmedia.am/sport/arcakh-ushu-evropayi-chempion/

[5] Տես՝http://yerkirmedia.am/sport/qung-fu-ceckrtuq-adrbejanci-hay/

[6] Տես՝https://artsakhpress.am/arm/news/60288/madridum-arcakhi-taxavari-arjev-adrbejancinery-boxoqi-akcia-en-kazmakerpel.html

[7] Տես՝ https://168.am/2017/03/02/761462.html

[8] Տես՝ http://www.aravot.am/2017/01/11/844528/

[9] Տես՝https://haqqin.az/news/93803

[10] Տես՝ https://www.zangezur.tv/news/view/1891.html

[11] Տես՝ https://haqqin.az/news/105170

Պատերազմի ժամանակ միջազգային իրավունքն այն ամենանրբին խնդիրն է, որ երբևէ կարելի է պատկերացնել: Իրոք, ինչպե՞ս կարելի է օրենքներ սահմանել մի այնպիսի իրավիճակի համար, որն ի բնե օրենք չի ընդունում:

Է.Կանտ

Չնայած Կանտի այս մտքին, մարդկությունը փորձել ու փորձում է մարդուն պաշտպանել պատերազմի դաժանություններից ու կամայականություն-ներից՝ պատերազմական օրենքներ սահմանելու միջոցով:

Պատերազմն, անշուշտ, ուժի գործադրում է, սակայն որոշակի սահմաններում եղող ուժի: Պատերազմը չի կարող ի չիք դարձնել քաղաքակրթության բոլոր նվաճումները և հաստատված սովորույթները: Բռնության գործողություններից վեր, այնուամենայնիվ, պահպանվում են որոշակի իրավունքներ ու պարտականություններ: Հենց սրանք էլ կազմում են պատերազմական օրենքները, որոնք հենվում են և՛ բանականության, և՛ մարդասիրական մղումների վրա և պարտադիր են բոլորի համար[1]:

2016թ. ապրիլի 2-ի առավոտյան ԼՂՀ պաշտպանության նախարարությունը հայտարարություն տարածեց այն մասին, որ ապրիլի 1-ի լույս 2-ի գիշերը շփման գծի հարավային, հարավարևելյան և հյուսիսարևելյան ուղղություններով հակառակորդը ձեռնարկել է բացահայտ հարձակողական գործողություններ՝ այլ զինատեսակների հետ միասին օգտագործելով հրետանի, զրահատեխնիկա և օդուժ:

Բացի առաջնագծում ընթացող մարտերից, հակառակորդը հրետանային հարվածներ է հասցրել խաղաղ բնակավայրերի և մի շարք զորամասերի մշտական տեղակայման վայրերին[2]:

Ապրիլի 2-ին՝ ժամը 08:30-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերի կողմից Մարտունու շրջանի Ճարտար քաղաքի միջնակարգ դպրոցի հրետակոծության հետևանքով սպանվեց այդ դպրոցի 12-ամյա աշակերտ Վաղինակ Գրիգորյանը, իսկ երկու երեխաներ ծանր վիրավորվեցին[3]:

Ապրիլի 3-ին հայտնի դարձավ, որ Ադրբեջանի Հանրապետության զինծառայողները դաժանաբար սպանել են Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի բնակիչներ Վալերիկ Խալաֆյանին, Ռազմելա Վարդանյանին, 92-ամյա Մարուսյա Խալաֆյանին իրենց տան մեջ, այնուհետև խեղել են նրանց դիակները[4]:

Ադրբեջանական բանակի կողմից կատարվող պատերազմական հանցագործություններին իրավական գնահատական է տվել ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանը՝ հրապարակելով միջանկյալ զեկույցներ:

Ապրիլի 21-ին հրապարակված առաջին զեկույցում[5] փաստերով վերլուծվում են Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը, ինչպես նաև դրա հետևանքները՝ դաժանությունների կոնկրետ օրինակներով: Ներկայացվում են քաղաքացիական բնակչության, և Պաշտպանության բանակի զինծառայողների կյանքի իրավունքի և խոշտանգման չենթարկվելու իրավունքի կոպիտ խախտման դեպքեր:

---

[1] Ժան Պիկտե. Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումն ու սկզբունքները. 2000թ., 107 էջ, էջ 88

[2] Տես՝ http://www.nkrmil.am/news/view/198

[3] Տես՝ http://www.aravot.am/2016/04/02/674074

[4] Տես՝ https://news.am/arm/news/320396.html

[5]Տես՝ http://ombudsnkr.am/Interim_Public_Report_NKR_Omb_FINAL.pdf

Մայիսի 2-ին հրապարակված փաստարկված իրավական գնահատականում[1] մանրամասն հիմնավորվել է, որ Ադրբեջանը շարունակում է լրջորեն խախտել մարդու հիմնարար իրավունքները՝ ոչ-ընտրողական հարձակումներ իրականացնելով խաղաղ բնակավայրերի վրա, ինչպես նաև սեփական քաղաքացիական բնակավայրերն օգտագործելով որպես թիրախ:

Դեկտեմբերի 9-ին հրապարակված երկրորդ զեկույցում[2] անդրադարձ է կատարվում երեք պատերազմական հանցագործությունների՝ խոշտանգում, մահվամբ պատժում (execution) և մարմինների անարգում:

Զեկույցում առանձին ներկայացվում են ադրբեջանական զինված ուժերի կարճաժամկետ կամ երկարաժամկետ հսկողության ներքո հայտնված ընդհանուր թվով 31 անձանց կամ նրանց մարմինների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի վարքագծին վերաբերող հարցերը:

Մարդու իրավունքների հռչակմանն ու երաշխավորմանն ուղղված միջազգային իրավական ակտերը, որոնք ամրագրում են մարդու հիմնական իրավունքները, որևէ տարբերակում չեն դնում ճանաչված և չճանաչված պետություններում բնակվող մարդկանց միջև, սակայն ակնհայտ է, որ չճանաչված պետությունների քաղաքացիները շատ հաճախ զրկվում են իրենց հիմնական իրավունքներն իրացնելու և պաշտպանելու իրավական հնարավորությունից: Խնդրի լուծման հեռանկարը կուրվագծվի միայն այն դեպքում, երբ մարդու իրավունքների դեմ ուղղված ցանկացած ոտնձգություն՝ անկախ տվյալ պետության իրավական կարգավիճակից, արժանանա պատշաճ գնահատականի՝ կախարգելիչ ազդեցություն ունենալով հետագայում նմանատիպ դեպքերի կրկնման համար:

Տաթև Ասրյան

ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *չճանաչված պետություն, մարդու իրավունքների խախտում, պատերազմական հանցագործություն, ապրիլյան պատերազմ*

Հոդվածում ուսումնասիրվում է չճանաչված պետության հայեցակարգը, միջազգային իրավական ճանաչման տեսությունները՝ սահմանադիր և հռչակագրային, այնուհետև ներկայացվում է ԱՀ չճանաչվածության բացասական հետևանքները՝ կոնկրետ օրինակներով:

Հոդվածի երկրորդ մասում անդրադարձ է կատարվում պատերազմական օրենքների կարևորությանը, Ապրիլյան պատերազմի ընթացքում Ադրբեջանի կատարած պատերազմական հանցագործություններին և Ադրբեջանի զինված ուժերի կատարած վայրագությունների մասին ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակած միջանկյալ զեկույցներին:

---

[1] Տես՝ http://ombudsnkr.am/Legal_Assessment_May_2_human_shielding_use_of_indiscriminate_weapons_FINAL.pdf

[2] Տես՝ http://www.ombudsnkr.am/en/docs/Report_PUBLIC.pdf

Татев Асрян

СПЕЦИАЛЬНЫЕ ВЫЗОВЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА В НЕПРИЗНАННЫХ ГОСУДАРСТВАХ

Ключевые слова: *непризнанное государство, нарушение прав человека, военное преступление, апрельская война.*

В статье рассматриваются концепция непризнанного государства, теории международно-правового признания – конституционные и декларативные, затем излагаются отрицательные последствия непризнанности Республики Арцах с конкретными примерами.

Вторая часть статьи затрагивает вопросы, связанные с промежуточными докладами Защитника прав человека Республики Арцах, в которых отмечается значимость законов войны, а также описываются военные преступления Азербайджана и зверства, совершенные азербайджанскими вооруженными силами в ходе апрельской войны.

Tatev Asryan

SPECIAL CHALLENGES IN HUMAN RIGHTS GUARANTEE IN UNRECOGNIZED STATES

Key words: *unrecognized state, human rights violation, war crime, april war*

The article examines the concept of unrecognized state, the constitutional and declarative theories of international legal recognition, as well as describes the negative consequences of non-recognition of the Republic of Artsakh, with concrete examples.

The second part of the article refers to the interim reports by the Human Rights Defender of the Republic of Artsakh, which highlight the significance of the laws of war, as well as describe the war crimes of Azerbaijan and the atrocities committed by the Azerbaijani armed forces during the April War.